ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-22-12/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 14.03.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Գալաջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 07.02.2022թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-22-12/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 1 896 200 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է՝ 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ՊՆ Տ և ՀԿԳՎ ՀԿ վարչություն):

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	<<ՄԵԳԱՄԱՐ>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Միքայելյան 66
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Մետաքս մ/հ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163218028989
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01283403
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ.ԲՐՈՒՏՅԱՆ	Մ. ԳԱԼԱՋՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-12/1-1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ	Ապրանքների մատակարարումը 2022թ. 1-ից 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2022թ.
3	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ մեծ)	հատ	38	49900	1896200	Ըստ ՀՀ ՊՆ Տ և ՀԿԳ վարչության կողմից տրված հայտերի

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-12/1-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ., ընդ որում			
Հ/հ	անվանումը	CPV կոդը	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
3	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ մեծ)	03121210/512	1516960	1687618	1744504	1896200

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ.ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

<<ՄԵԳԱՄԱՐ>> ՍՊԸ
Տնօրեն

Մ. ԳԱԼԱՋՅԱՆ